ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

22 օգոստոսի 2019թ. N 300-Ա

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 7-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշումով՝

կ ա ր գ ա դ ր ու մ եմ

1. Ստեղծել «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողով» հետևյալ կազմով.

Հ.Զոբանյան	-	Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետ
Ա. Նազարյան	-	Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ
Վ. Սուքոյան	-	ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Հ. Փաշինյան	-	ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալ
Մ. Մելքումյան	-	ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Դ. Խառատյան	-	ՀՀ բնապահպանության նախարարության պետական տեսչության Տավուշի մարզի տարածքային բաժնի գլխավոր տեսուչ
Զ. Մարդանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության Տավուշի բաժնի պետ

Գ. Գասպարյան	-	ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի <Տավուշ> ՋՕ-ի <Իջևան-Ուտիք> տեղամասի պետ
	-	Համապատասխան համայնքի ղեկավար (համաձայնությամբ) համապատասխան համայնքի գյուղատնտեսության գծով մասնագետ (համաձայնությամբ)
Ա. Դովլաթբեկյան	-	ՊՄՊ Տավուշի մարզային ծառայության պետ

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012թ. փետրվարի 27-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողով» թիվ 7-Ա կարգադրությունը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

X

22 օգոստոսի 2019թ.
ք. Իջևան